

Արձանագրություն N 3-03/17

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի 2017 թ.-ի
մարտի 22-ի նիստի

Ներկա էին՝ Թորմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Իսրայելյան Ռ.Գ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Խաչատրյան Գ.Մ. (Ֆ.մ.գ.թ.), Հարությունյան Մ.Ա. (պ.գ.թ.), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ.), Պողոսյան Ա.Ա., Առաքելյան Ա.Ա., Սայիյան Ռ.Գ., Բաղդունց Գ. Ռ., Հակոբյան Ռ.Ս., Հակոբյան Շ.Հ., Շահբազյան Ա.Վ., Դավթյան Շ.Ա., Զաքարյան Գ.Է. (ուսանող), Ծատրյան Ս.Բ. (ուսանող):

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ.դոցենտ), Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ., դոցենտ.) և Հարությունյան Ռ.Մ.:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ճարտարապետաշինարարական ֆակուլտետի դեկանի, «Հումանիտար և լեզուների» ու «Էկոնոմիայի և կառավարման» ամբիոնների վարիչների ընտրությունների մասին:

2. «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության» կարգում փոփոխություններ կատարելու մասին:

3. Բնական ճարպանյութերի, եթերայուղերի, արոմատիկ և ֆիտոնցիտ նյութերի ստացման համար համապատասխան բույսեր աճեցնելու նպատակով համալսարանի ուսումնափորձնական կենտրոնի հարակից տարածքի թեք չօգտագործվող լանջերը վարձակալելու մասին պրոռեկտոր՝ Ս.Գալստյանի զեկուցագրի մասին:

4. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի 2016թ. գործունեության մասին հաշվետվությունը հրատարակման ներկայացնելու մասին:

5. Այլ հարցեր

Լսեցին 1-Կայացվեցին Շուշիի տեխնոլոգիական համալսարանի Ճարտարապետաշինարարական ֆակուլտետի դեկանի, «Հումանիտար և լեզուների» ու «Էկոնոմիայի և կառավարման» ամբիոնների վարիչների ընտրություններ:

Որոշեցին 1 - Գիտխորհրդը փակ գաղտնի քվեարկությունների միաձայն արդյունքներով որոշել է.

1. Ճարտարապետաշինարարական ֆակուլտետի դեկան նշանակել տ.գ.դոցենտ, պրոֆեսոր՝ Ռուդոլֆ Գերասիմի Իսրայելյանին,

2.«Հումանիտար և լեզուների» ամբիոնի վարիչ նշանակել պ.գ.թ., դոցենտ՝ Միեր Ալեքսանդրի Հարությունյանին,

3.«Էկոնոմիայի և կառավարման» ամբիոնի վարիչ նշանակել տ.գ.թ.՝ Սուսան Աբկարի Ավետիսյանին:

Լսեցին 2–«Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության» կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկով հանդես եկավ պրոռեկտոր՝ Ռ.Հարությունյանը:

Որոշեցին 2–Շուշիի տեխնոլոգիական համալսարանի հունվարի 31-ի N1-01/17/3 որոշմամբ հաստատված «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության» կարգում կատարել հետևյալ փոփոխությունները.

- I գլխի 5-րդ կետում ավելացնել.

5.Ամբիոնի վարիչի թեկնածու(ներ)ի ընտրությունների անցկացումը համակարգում է Համալսարանի ռեկտորի տեղակալը՝ ուսումնական աշխատանքների գծով:

- II գլխի 7-րդ կետի երկրորդ նախադասության «Բացառիկ դեպքերում» բառերից հետո ավելացնել.

(ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթին գիտական կոչում կամ աստիճան ունեցող թեկնածուի բացակայության) նախադասությունը:

Լսեցին 3 - Բնական ճարպանյութերի, եթերայուղերի, արոմատիկ և ֆիտոնցիտ նյութերի ստացման համար համապատասխան բույսեր աճեցնելու նպատակով համալսարանի ուսումնափորձնական կենտրոնի հարակից տարածքի թեք չօգտագործվող լանջերը վարձակալելու մասին պրոռեկտոր՝ Ս.Գալստյանի ներկայացումը:

Որոշեցին 3 - Հանձնարարել պրոռեկտոր՝ Պ.Գասպարյանին համալսարանի ուսումնափորձնական կենտրոնի հարակից տարածքի թեք չօգտագործվող լանջերը վարձակալությամբ ձեռք բերելու խնդրանքով դիմել Ստեփանակերտի քաղաքապետարանին և ապահովել գեոդեզիական հանույթի ստացումը:

Լսեցին 4 – Շուշիի տեխնոլոգիական համալսարանի 2016թ. գործունեության մասին հաշվետվությունը հրատարակման ներկայացնելու մասին:

Որոշեցին 4 - Հրատարակման ներկայացնել Շուշիի տեխնոլոգիական համալսարանի 2016թ. գործունեության մասին հաշվետվությունը:

Լսեցին 5.1 - Շուշիի տեխնոլոգիական համալսարանի միջին մասնագիտական կրթության I կուրսի ուսանող՝ Վարդան Արմենի Աբրահամյանին, ով Թբիլիսիում Եվրասիական Կոնսֆուի առաջնությունում իր քաշային կարգում նվաճել է չեմպիոնի կոչում, եզրափակիչում հաղթելով Ադրբեջանի ներկայացուցիչին, պարգևատրման ներկայացնելու մասին:

Որոշեցին 5.1 - Մարտի 17-ից 21-ը Թբիլիսիում Եվրասիական Կոնսֆուի առաջնությունում չեմպիոնի կոչում նվաճելու համար Շուշիի տեխնոլոգիական համալսարանի միջին մասնագիտական կրթության I կուրսի ուսանող՝ Վարդան Արմենի Աբրահամյանին պարգևատրել շնորհակալագրով և արժեքավոր նվերով:

Լսեցին 5.2 - ԱրՊՀ բակալավրի հեռակա ուսուցման համակարգի «Տրանսպորտային ուղիների շինարարություն, կառավարում և շահագործում» մասնագիտության IV կուրսի

նախկին ուսանող՝ Տիգրան Աշոտի Սաղյանի դիմումը, համաձայն որի խնդրում է իրեն վերականգնել Շուշիի տեխնոլոգիական համալսարանի նույն մասնագիտության համապատասխան կուրսից:

Որոշեցին 5.2 - ԱրՊՀ բակալավրի հեռակա ուսուցման համակարգի «Տրանսպորտային ուղիների շինարարություն, կառավարում և շահագործում» մասնագիտության IV կուրսի նախկին ուսանող՝ Տիգրան Աշոտի Սաղյանին վերականգնել Շուշիի տեխնոլոգիական համալսարանի նույն մասնագիտության համապատասխան կուրսից, չգանձելով նրանից IV կուրսի երկրորդ կիսամյակի ուսման վարձավճարը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն մուծել է ԱրՊՀ-ում: Առաջացած առարկայական պարտքերը մարել 2016թ. սեպտեմբերի 26-ի ՇՏՀ-ի գիտխորհրդում հաստատված «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսանողների ակադեմիական շարժունության» կարգի IV գլխի 23 կետի պահանջներին համապատասխան:

Նախագահ՝	ստորագրություն	Հ.Վ.Թորմաջյան
Քարտուղար՝	ստորագրություն	Ա.Ա.Առաքելյան